

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է. ԴԻԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԻՐՎԻՆԳ

Շուտով տեղի կունենան խորհրդարանական հերթական ընտրությունները և կձևավորվի ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովը: Նախընտրական խոստումների տեսքով գրեթե բոլոր քաղաքական ուժերի կողմից բարձրաձայնվեց և շռայլվեց արդար, անկախ, արդյունավետ, թափանցիկ դատաիրավական համակարգ ունենալու անհրաժեշտությունը: Հուսով ենք, որ դրանք սույն նախընտրական խոստումներ չեն և խորհրդարանական ընտրություններում հաղթող քաղաքական ուժերի կողմից կյանքի կկոչվեն ու կիրականացվեն: Ինչևէ, երկրորդ սերնդի դատաիրավական բարեփոխումների իրականացումը ներկայիս հրամայականն է: Հասկանալի պատճառներով այդ բարեփոխումները պետք է իրականացվեն նոր սերնդի իրավաբանների կողմից, ովքեր դրանց իրականացման համար կցուցաբերեն համապատասխան կամք և վճռակամություն՝ կրողը լինելով մասնագիտական բարձր գիտելիքների ու բարոյական հատկանիշների: Պարզ է ևս մեկ կարևոր հանգամանք, երկրորդ սերնդի դատաիրավական բարեփոխումների իրականացումը կհանդիպի որոշակի հակազդեցության: Հակազդեցություն, որը հեշտորեն հաղթահարելի է համապատասխան քաղաքական կամքի և հետևողական պայքարի շնորհիվ:



### ԼՐԱՅՈՍ

#### ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արթուր Օսիկյանի հետ: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

2007թ.-ի ապրիլի 16-17-ին Հայաստանի պատվիրակությունը Ստամբուլում մասնակցեց դատավորների 5-րդ միջազգային խորհրդաժողովին: Պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանը, իսկ պատվիրակության կազմում ընդգրկվել էին ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի ղեկավար Արման Մկրտումյանը, «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության գործընկեր Վրեժ Գասպարյանը, ինչպես նաև այլ դատավորներ և իրավաբաններ:

#### ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ ԼՈՌՈՒ ՍԱՐԶԻ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

2007թ.-ի ապրիլի 18-ին Վանաձորում տեղի ունեցավ Լոռու մարզի դատախազության կենտրոնական նստավայրի վարչական վերանորոգված շենքի բացումը: Շենքը կապիտալ վերանորոգվել է ՀՀ պետական բյուջեից 2006թ.-ին հատկացված գումարի շրջանակներում: 2007թ.-ի ընթացքում, ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների շրջանակներում, նախատեսվում է վերանորոգել դատախազության թվով 9 վարչական շենք:

#### ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔ ` ՇԵՆԳԱԿԻԹ ՀԱՄԱՅՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՑՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

2007թ.-ի ապրիլի 12-ին տեղի ունեցավ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի նորակառույց շենքի բացման արարողությունը: Դատարանի նոր շենքի կառուցումն իրականացվել է Համաշխարհային բանկի կողմից հատկացած վարկային և պետական բյուջեի միջոցներով:

#### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

ՀՀ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանի հրամանով դատախազությունում ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք կհամակարգեն խորհրդարանական ընտրությունների ընթացքում իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների հետ կապված աշխատանքները:

#### ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

2007թ.-ի ապրիլի 2-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ լույս է տեսել ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածուի առաջին հատորը: ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածուի առաջին հատորում տեղ են գտել Վճռաբեկ դատարանի որոշումները՝ սկսած 2006 թվականի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսը: Ժողովածուն, ցավոք, չի պարունակում վերոհիշյալ ժամանակահատվածում ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ընդունված բոլոր որոշումները:

#### ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՓԱՏՄԱԲԱՆՆԵՐ

2007թ.-ի ապրիլի 5-ին ՀՀ Վճռաբեկ դատարան բողոքներ ներկայացնելու իրավունք տվող հավատարմագրեր ստացան 55 փաստաբաններ: «Մենք ընտրյալներ ենք և ունենք որոշակի առաքելություն. մենք պետք է կատարելագործենք մեր երկրի իրավական համակարգը», - հավատարմագրերի հանձնման արարողության ժամանակ ասաց ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռ. Սահակյանը:

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2007**

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, ՀՀ Ազգային Ժողովի ընտրությունների վերաբերյալ քաղաքացիների իրավական իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով, 2007թ.-ի ապրիլի 9-ից սկսած հասարակությանը իր 7 գրասենյակների ցանցի միջոցով մատուցում է անվճար իրավաբանական խորհրդատվություն, իսկ ՀԵԻԱ-ի կամավորները Երևանում և մարզերում բնակվող քաղաքացիների շրջանում տարածում են Վրաստանում և Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատան Մատրա ԿԱՊ փոքր դրամաշնորհների ծրագրի կողմից տրամադրված միջոցների հաշվին իրականացվող «Ընտրական իրավունքների իրազեկության և պաշտպանության քարտ-գարշավ» ծրագրի շրջանակներում ԱԺ ընտրությունների վերաբերյալ ՀԵԻԱ-ի կողմից հրատարակված հետևյալ 10 անուն տեղեկատվական թերթիկները՝ «Ընտրական իրավունքը Հայաստանում», «Ազգային Ժողովի ընտրակարգը, պատգամավորության թեկնածուների և պատգամավորների իրավունքները և պարտականությունները», «Ընտրողների ցուցակները, դրանց անճշտությունների վերացման կարգը», «Նախընտրական քարտզույթի ընդհանուր պայմանները», «Նախընտրական քարտզույթի ֆինանսավորումը և թափանցիկությունը», «Վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները ընտրական գործընթացում», «Զվեարկության գործընթացը», «Ընտրական օրենսդրության հնարավոր խախտումները ընտրական գործընթացի տարբեր փուլերում», «Պատասխանատվությունը ընտրական օրենսդրության խախտման համար», «Ընտրական իրավունքների պաշտպանության մեխանիզմները»:



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**

**ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
01.01.2007-31.03.2007**

2007թ.-ի վերը նշված ժամանակահատվածի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է 740 դիմում-բողոք, որից 264-ը՝ գրավոր: Գրավոր դիմումներից 13-ը կազմում են կողեկտիվ դիմում-բողոքներ, որոնք ներառում են 310 դիմումատու: Մինչև ապրիլի 28-ը նշված ժամանակաշրջանում ստացված դիքում-բողոքներից դրական լուծում է ստացել միայն 7-ը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ ուղղված գրավոր դիքում-բողոքների վիճակագրությունը ըստ դիմած անձերի հետևյալն է.

1. Երևանի քաղաքապետարան՝ 222
2. Քաղաքապետարաններ (բացի Երևանից)՝ 46
3. Դատախազություն՝ 40
4. Ոստիկանություն՝ 33
5. Դատարաններ՝ 27
6. Արդարադատության նախարարություն՝ 17

7. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ 16
8. Երևանի քաղապետարաններ՝ 15
9. Մարզպետարաններ՝ 12
10. Գյուղապետարաններ՝ 7
11. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ 7
12. Պաշտպանության նախարարություն՝ 6
13. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող հանձնաժողով՝ 5
14. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերով հանձնաժողով՝ 5
15. Այլ պետական մարմիններ՝ 24
16. Այլ ոչ պետական մարմիններ՝ 40:

Վերը նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ ստացված բողոքների շարքում գերակշռում են քաղաքապետարանների, դատախազության, ոստիկանության, դատարանների և արդարադատության նախարարության դեմ տրված դիմում-բողոքները:

**ԱՐԺԵՔԱՅԻՆ ԸՆՄԱԿԱՐԳ. ՆՅՈՒԹ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ**

Խորհրդային Միության փլուզումն իր հետ փլուզեց նաև այդ տարիներին ինչ-որ չափով ձևավորված իրավական համակարգը, ուստի, Հայաստանում անհրաժեշտություն առաջացավ ձևավորել նոր իրավական համակարգ: Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պետությունների, իր իրավական ինստիտուտները ներմուծեց քիչ թե շատ զարգացած այլ պետություններից՝ չփորձելով ստեղծել իրենը: ՀՀ անկախացումից հետո կարելի է փաստել, որ ՀՀ իրավական համակարգի ինստիտուտների զգալի մասը եվրոպականացված են, սակայն ՀՀ-ն, չգիտես ինչու, չդարձավ եվրոպական երկիր: Եվ այստեղ տրամաբանական հարց է առաջանում ինչո՞ւ ՀՀ-ն գոնե չնոտեցավ եվրոպական արժեքային համակարգին:

Փորձենք այս հարցը դիտարկել դատական արդարադատության լույսի ներքո: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը մի կողմից ունի եվրոպական երկրներին բնորոշ օրենսդրական դաշտ (հիարկե, ես այստեղ վերապահումով եմ մոտենում հարցին, քանի որ բազմաթիվ օրենքներ թեև արտագրվել են եվրոպական երկրների համապատասխան օրենքներից, սակայն շատ ցածր որակով: Համեմատեք ՀՀ և ՌԴ քաղաքացիական օրենսգրքերը կամ աշխատանքային օրենսգրքերը և այլն), իսկ մյուս կողմից էլ ունի խորհրդային դատական համակարգով անցած և այդ համակարգի դաստիարակությունը ստացած դատավորներ, որոնք այդ եվրոպական օրենքները փորձում են կիրառել այնպես, ինչպես խորհրդային տարիներին, և արդյունքում ունենում ենք այն, ինչ ունենք: Եթե սրան էլ գումարենք կոռուպցիոն ռիսկերը, ապա պատկերը դառնում է ամբողջական: Ասվածը պատկերավոր դարձնելու համար բերեն մի քանի օրինակներ դատական պրակտիկայից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 96 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Ալիմենտ բռնագանձելու գործով դատարանը կարող է ալիմենտ բռնագանձելու որոշում կայացնել մինչև ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ երեխաների համար ալիմենտ բռնագանձելիս՝ մինչև ալիմենտ բռնագանձելու մասին վճիռ կայացնելը»: Այս նորմը նպատակաուղղված է անապահով կողմի պաշտպանվածությանը դատական ձգձգումներից, իսկ երեխաների մատուլ այն ավելի ներացված է՝ հաշվի առնելով երեխաների իրավունքների պաշտպանվածության առավել կարևորության աստիճանը: Իսկ ինչպե՞ս են ՀՀ դատարանները կիրառում այս նորմը:

2006 թվականին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանում, նախագահող՝ Ա. Հունանյան, իմ մասնակցությամբ քննվում էր ընտանեկան



գործ՝ երեխայի ալիմենտի պահանջով: Նկատելով, որ մյուս կողմը (երեխայի հայրը) փորձում է ձգձգել գործը, ես դատարանին միջնորդություն ներկայացրեցի, վերը նշված հոդվածի համաձայն, մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, պատասխանողից երեխայի համար բռնագանձել ալիմենտ: Այս միջնորդությանը դատարանը պատասխանեց «Վայ, բայց գիտեք... թեև օրենսգրքում մտնում է հոդված կա, բայց դա դատական պրակտիկայում չի կիրառվում, ուստի ձեր միջնորդությանը չեն անդրադառնում»: Ավելի արսուրդային վիճակի հանդիպեցի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում 2007 թվականին՝ նույնանման գործով: Երբ նախագահող դատավոր Վ. Լալայանին ներկայացվեց նույնանման միջնորդություն՝ հիմքում ունենալով երեխաների շահերը, դատավոր Վ. Լալայանը երկար մտածելուց հետո պատասխանեց. «Սա, ըստ էության, հակընդդեմ հայց է, և ես մերժում եմ այն», իսկ հակընդդեմ հայցի ինստիտուտը կարգավորվում է ոչ թե ընտանեկան օրենսգրքի 96 հոդվածով, այլ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96 հոդվածով: Նորանկախ Հայաստանի դատավորը, որն ունի նոր դատական համակարգում տաս տարվա աշխատանքային փորձ և սովորական միջնորդությունը շփոթում է հակընդդեմ հայցի հետ...: Իսկ երեխաները մնացին անապահով: Ի դեպ, այս դատավորի կողմից սա միակ դեպքը չէ, երբ կայացվում են այնպիսի որոշումներ և վճիռներ, և նրա մտքի թելը իրավաբանները երկար են փնտրում՝ այդպես էլ չգտնելով այն:

Եվ այսպես, ինչո՞ւ չենք դառնում եվրոպական: Ըստ իս՝ չենք դառնում, որովհետև մինչև օրենքներին անցնելը պետք է փոխենք մեր մտածելակերպը, ավելի՛մ մեր ամբողջ արժեքային համակարգը: Առավել ևս, դա պետք է հետևողականորեն փոխվի դատական համակարգում՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի: Արդյունքում, համոզված եմ, կունենանք համակարգ, որն, անկախ անձանց փոփոխությունից, կաշխատի, և այդ համակարգում երեխաները անապահով չեն մնա, իսկ մարդկանց իրավունքները կպաշտպանվեն:

**ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԼՅԱՆ**  
իրավաբան

**ՈՒՄԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2007թ.-ի ապրիլի 12-ին տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության լավագույն իրավաբանական ընկերությունների պարգևատրման արարողությունը: 2007թ.-ին իրավաբանական ընկերություններին պարգևները հանձնվեցին ոչ միայն իրավաբանական ծառայությունների մատուցման բնագավառում ցուցաբերած բարձր մակարդակի, այլ նաև սոցիալական կարևորագույն խնդիրներին լուծմանը ակտիվ մասնակցության համար:

«Իրավաբանական կրթության զարգացման գործում ունեցած ներդրում» անվանակարգում հաղթեց «Ուայթ ընդ Քեյս» իրավաբանական ընկերությունը: Այս անվանակարգի նպատակն է խրախուսել այն իրավաբանական ընկերություններին, որոնք ակտիվորեն աշխատում են իրավաբանական բուհերի հետ՝ իրավաբանական կրթության որակի բարելավման բնագավառում: «Ուայթ ընդ Քեյս» իրավաբանական ընկերությունը Ռուսաստանի Դաշնությունում հանդիսանում է նաև «Ֆիլիպ Ջեսսփի անվան միջազգային իրավունքի դատախազ» մրցույթի ազգային փուլի կազմակերպիչը: ՀՀ-ում «Ֆիլիպ Ջեսսփի անվան միջազգային իրավունքի դատախազ» մրցույթի ազգային փուլի կազմակերպիչներն են «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և Հայաստանի իրավաբանական հիմնադրամը:

«Օրինատեղծ գործունեության բնագավառում ակտիվ մասնակցություն» անվանակարգում հաղթեց «Պեպելյաս, Գուցբլատ և գործընկերներ» իրավաբանական ընկերությունը: Այս անվանակարգի նպատակն է խրախուսել այն իրավաբանական ընկերություններին, որոնք ակտիվորեն մասնակցում են օրինատեղծ գործունեությանը: «Պեպելյաս, Գուցբլատ և գործընկերներ» իրավաբանական ընկերությունը օրենսդրության զարգացման նպատակով կատարում է ուսումնասիրություններ և վստահորդների շրջանում հարցումներ, իրականացնում է

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ**



դատական պրակտիկայի և միջազգային փորձի մոնիտորինգ: Բացի այդ՝ սերտորեն համագործակցում է ՌԴ Պետական Դումայի և Դաշնության խորհրդի հետ:

«Գիտալուսավորչական գործունեություն» անվանակարգում հաղթեց «Եգորով, Պուզինսկի, Աֆանասև և գործընկերներ» իրավաբանական ընկերությունը: Այս անվանակարգի նպատակն է խրախուսել այն իրավաբանական ընկերություններին, որոնք նպատակում են իրավական պետության և իրավագիտության զարգացմանը, մասնավորապես, գիտական աշխատանքների տպագրությանը, գիտաժողովներին և սեմինարներին ակտիվ մասնակցությանը, ինչպես նաև ՋԼՄ-ների հետ հաշտող համագործակցությանը:

**ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԲԱՐԵՆԻՐՁ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ Ե**

*- Պարոն Օսիկյան, որո՞ւք են ներկայումս ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության առջև ծառայած իրավական բնույթի հիմնական խնդիրները, և արդյո՞ք հարկային պետական ծառայությունն ունի բարեփոխումների կարիք:*

- Նախ նշեմ, որ Հարկային պետական ծառայությունում վերջին տարիներին ընթացել են լուրջ բարեփոխումներ, ինչը տրամաբանական շարունակությունն էր և նաև արդյունքը ՀՀ-ում իրականացվող պետական կառավարման համակարգի բարեփոխումների: Արդեն ավելի քան չորս տարի է ընդունվել է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող մոտ երկու տասնյակ ենթաօրենսդրական ակտեր, որոնք հիմնովին բարեփոխել են Հարկային պետական ծառայության համակարգը: Օրենքով նախատեսվել են մի շարք դրույթներ, հարկային ծառայության հիմնարար սկզբունքներ, որոնք ունեն թե կազմակերպչական-իրավական նշանակություն և թե հակակոռուպցիոն նշանակություն: Օրինակ՝ այսօր հարկային ծառայության կարելի է անցնել միմիայն մրցույթի արդյունքներով, ինչը էականորեն նվազեցնում է «անորակ» կադրերի մուտքը պետական համակարգ, կամ օրենքով նախատեսվել է ռոտացիայի սկզբունքը, համաձայն որի՝ հարկային ծառայողները չպետք է երկար ժամանակ աշխատեն միևնույն պաշտոնին և որոշակի ժամանակի ընթացքում նրանք պետք է փոխադրվեն այլ համարժեք պաշտոնի, ընդունվել են հարկային ծառայողի վարքագծի կանոնները, օրենքով նախատեսվել են նաև մի շարք սահմանափակումներ հարկային ծառայողների համար: Բայց կան դեռևս չլուծված խնդիրներ թե իրավական և թե վարչարարական բնույթի: Օրերս ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Հարկային պետական ծառայության եռամյա ծրագիրը, որով և փորձ է կատարվելու լուծել ծառայության առջև ծառայած իրավական հիմնախնդիրները: Նշեմ նաև, որ ծրագրի իրականացմանը անմիջականորեն աջակցում է ԱՄՆ Միջազգային կարգապահ գործակալությունը, և այսօր արդեն կա ընտրված խորհրդատու կազմակերպություն և հաստատված համատեղ գործողությունների ծրագիր, որտեղ նախատեսված են թե իրավական բնույթի, թե կազմակերպչական և թե հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Վերջիններիս իրականացման արդյունքում, համոզված եմ, որ էականորեն կբարելավվի վիճակը:

*- Հիմնականում ի՞նչ իրավախախտումներ են կատարվում հարկային իրավահարաբերությունների ոլորտում և որո՞ւք են, ըստ Ձեզ, դրանց կատարման պատճառներն ու կատարմանը նպաստող պայմանները:*

- Հարկային բնույթի իրավախախտումները բազմաբնույթ են, բայց հետևանքը, արդյունքը հիմնականում մեկն է՝ չեն վճարվում կամ պակաս են վճարվում հարկերը, տուրքերը կամ օրենքով նախատեսված պարտադիր այլ վճարները: Հիմնական իրավախախտումները, որոնք վեր են հանվում հարկ վճարողների մոտ կատարված ստուգումներով, հարկերը սխալ հաշվարկելն է, հարկի վճարումը ուշացնելն է, հաշվապահական հաշվառումը խախտումով վարելն է, հարկվող օբյեկտ թաքցնելը կամ պակաս ցույց տալն է, ամապրանք գործարքները՝ առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթերի տրամադրելը, ինպես նաև առանց պետական գրանցման կամ թույլտվության (լիցենզիայի) ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելն է: Այս խախտումների արդյունքում ստուգման ակտով առաջադրվում են լրացուցիչ հարկային պարտավորություններ, նշանակվում են տուգանքներ, հաշվարկվում են տույժեր: Բացի այդ՝ նշված խախտումների հետևանքով անձինք կարող են ենթարկվել կամ վարչական կամ քրեական պատասխանատվության՝ կախված իրավախախտման բնույթից, պատժառված վնասի աստիճանից: Ինչ վերաբերվում է այն հարցին, թե որոնք են այդ իրավախախտումների պատճառները, ապա դա, կարծում եմ, մի դեպքում հարկային օրենսդրության չիմացությունն է,



անորակ հաշվապահությունն է, բայց ամենից «վտանգավոր» պատճառը ուղղակի ցանկությունն է հարկեր չվճարել: Նպաստող պատճառները կարող են լինել թե ժամանակին չկանխելը, թե օրենքների որոշ անկատարությունը, ինչին էլ ուղղված են մեր ամենօրյա ջանքերը, աշխատանքները, ծրագրերը:

*- Ի՞նչ դեր ունի ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ հետախուզության վարչությունը հարկային իրավախախտումների նախագգուչացման, կանխման, խափանման և բացահայտման գործում: Որքանո՞վ է արդյունավետ Ձեր կողմից ղեկավարվող մարմնի իրականացրած աշխատանքները հարկային օրենսդրության խախտումները կանխելու և բացահայտելու գործում:*

- Պետք է նշեմ, որ ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ հետախուզության վարչության գործառնությունը նախատեսված են «Հարկային ծառայության մասին» և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով: Եվ հիմնական իրավական «գործիքը», որի օգնությամբ օպերատիվ հետախուզության վարչությունը պայքարում է հարկային իրավախախտումների դեմ, ստուգումներն են: Այդ ստուգումները հիմնականում ուղղված են ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, անապրանք գործարքներ (այսպես ասած թուրք վաճառողներ) իրականացնողների դեմ, իրականացվում են նաև ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, այսինքն՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելուն ուղղված ստուգումներ: Արդյունքում, եթե լինում են անհրաժեշտ իրավական հիմքեր, ապա նախապատրաստվում են նյութեր և ուղարկվում են ՀՊԾ հետաքննության բաժին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հետաքննություն իրականացնելու համար: Ընդ որում՝ պետք է նշեմ, որ հետաքննության բաժնի կողմից նախապատրաստվող նյութերի հիմնական մասը ուղարկվում են հենց օպերատիվ հետախուզության վարչության կողմից: Կարծում եմ վարչության ամբողջական գործունեության համար կա իրավական դաշտի բաց. դեռևս չի ընդունվել «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքը, որն էականորեն

կրթարժրացնի աշխատանքի արդյունավետությունը: Սակայն, ինչպես ասում են, սառույցը տեղից շարժվել է, և Ազգային ժողովի կողմից նշված օրենքը արդեն իսկ ընդունվել է երկրորդ ընթերցմամբ:

*-Ինչպե՞ն կզնահատեք հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության դրակը: Արդյո՞ք բավարար է գործող օրենսդրության մակարդակը հարկային հանցագործությունների և զանցանքների դեմ արդյունավետ պայքարելու համար:*

-Գիտեք ինչ, հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը մշտական կատարելագործման, փոփոխությունների մեջ է գտնվում: Դա նշանակում է, որ այն հեռու է կատարյալ լինելուց: Հարկային հանցագործությունների դեմ պայքարի տեսանկյունից պետք է նշեմ, որ մոտ մեկ տարի առաջ (2006 թվականի հունիսի 1) փոփոխություններ կատարվեցին ՀՀ քրեական օրենսգրքում (հոդված 205), որն ըստ էության փորձ էր լրացնել օրենսդրական բացը, ինչը չարաշահվում էր անբարեխիղճ հարկատուների կողմից: Այսպես՝ մինչ փոփոխությունները հարկեր վճարելուց խուսափելը հանցագործություն էր, եթե անձը խեղաթյուրված տվյալներ էր մտցնում հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվությունների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի մեջ: Նոր փոփոխություններով արարքը դառնում է քրեորեն հետապնդելի, եթե անձը հարկերը վճարելուց խուսափում է նաև հաշվետվություններ չներկայացնելու եղանակով: Սակայն, եթե քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի նախկին խմբագրության համաձայն արարքը համարվում էր հանցագործություն մեկ միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարները չվճարելու համար, ապա, արդեն գործող խմբագրությամբ, չվճարված գումարի չափը բարձրացվել է երկու միլիոն դրամ: Այսինքն՝ եթե չվճարված հարկի գումարը պակաս կլինի երկու միլիոն դրամից, ապա անձը կենթարկվի վարչական պատասխանատվության: Բացի այդ՝ նոր փոփոխությամբ առաջին անգամ հանցանք կատարած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հատուցում է պետությանը պատճառված վնասը: Տեղեկատվության համար նշեմ նաև, որ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի, Հարկային մարմինը համարվում է հետաքննության մարմին և քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետաքննություն հարկային հանցագործություններով, դրանք են՝ հարկեր վճարելուց խուսափելը, ապօրինի ձեռնարկատիրությունը, կանխամտածված սնանկությունը, կեղծ սնանկությունը, կեղծ ձեռնարկատիրությունը, ակցիզային դրոշմանիշներ կեղծելը և այլն: Տեղեկատվության կարգով նշեմ, որ ՀՊԾ հետաքննության բաժնի կողմից 2002 թվականին հարուցվել էր ընդամենը 1 քրեական գործ, բայց արդեն դրան հաջորդող տարիներին հետաքննության բաժինը սկսեց ավելի հաճախ օգտվել իրեն վերապահված իրավասությունից, այսպես՝ հարուցվել են 2003-ին՝ 4, 2004-ին՝ 24, 2005-ին՝ 37, 2006-ին՝ 46 քրեական գործեր, իսկ այս տարվա երեք ամիսներին արդեն 12 քրեական գործեր: Դրանց մեջ հիմնականում հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարները վճարելուց խուսափելու և ապօրինի ձեռնարկատիրության դեպքերն են՝ մոտ 60%

միասին վերցրած: Ցանկանում եմ նշել նաև, որ, ներկայումս հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումների գործընթացի շրջանակներում, Հարկային պետական ծառայությանը վերապահվել են նաև նախաքննության մարմնի գործառույթներ, և առաջիկա մեկ ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ ՀՊԾ-ում կստեղծվի նաև Զննչական բաժին, որի քննչական ենթակայությանը վերապահվել են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հարկային հանցագործությունները: Այս փաստը, կարծում եմ, կնպաստի նաև հարկային հանցագործություններով պետությանը պատճառված վնասի վերականգնման արդյունավետության բարձրացմանը:

*-Ի՞նչ աշխատանքներ են ներկայումս կատարվում հարկային պետական ծառայության աշխատակիցների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման և հարկատուների հետ քաղաքակիրթ հարաբերությունների ձևավորման համար:*

-Նախ, արդեն վերը նշեցի, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն աշխատանքի կարող են ընդունվել միայն մրցույթի արդյունքներով, որի կարգը հաստատվել է կառավարության որոշմամբ, բացի այդ, կան կոնկրետ մասնագիտությունների ցանկ և կոնկրետ չափանիշներ, որոնց առկայության դեպքում միայն կարելի է մասնակցել մրցույթի: Բացի այդ՝ բոլոր հարկային ծառայողները պարտավոր են առնվազն երեք տարին մեկ անգամ անցնել ատեստավորում, ինչի արդյունքում լինում են պաշտոնի իջեցման, աշխատանքից ազատման դեպքեր: Կարծում եմ՝ ատեստավորման գործընթացը ստիպում է հարկային ծառայողներին, որպեսզի նրանք լինեն ավելի զգոն և մշտապես մտածեն իրենց գիտելիքների մշտական խորացման համար: Վերը նշված ծրագրի շրջանակներում պլանավորվում է հարկային ծառայողների համար ստեղծել հարկային ծառայության ուսումնական կենտրոն՝ հագեցված թե տեխնիկական և թե պրոֆեսիոնալ դասախոսական կազմով: Այսօր գործում են նաև հարկային ծառայության ծառայողական քննությունների և զանգատարկման հանձնաժողովները, որոնք քննարկում են հարկային ծառայողների կողմից թույլ տրված բացթողումները, խախտումները, հարկային ծառայողի վարքագծի կանոններին ոչ հարկի գործողությունները և դրանց տրվում են համապատասխան գնահատականներ: Նշված հանձնաժողովներին հրավիրվում են նաև համապատասխան հարկ վճարողները: Մշակվել և ՀՊԾ պետի կողմից հաստատվել է նաև ստուգումների իրականացման ռազմավարությունը, որտեղ տեղ են գտել նաև նոր մոտեցումներ, սկզբունքներ եվրոպական երկրներում իրականացվող ստուգումների որոշակի չափորոշիչներ:

*-Արդյոք կա՞ն հարցեր, որոնք այս հարցազրույցում չարժարծվեցին, բայց դուք կցանկանաք անդրադառնալ դրանց:*

-Ես միայն կցանկանալի հավաստիացնել, որ մեր ծառայության գործունեության հիմնական նպատակը բարեխիղճ հարկատուների իրավունքների պաշտպանությունն է, նրանց գործերին անտեղի չմիջամտելը, իսկ նրանք, որոնք անբարեխիղճ հարկատուներ են և չեն կատարում Սահմանադրությամբ նախատեսված իրենց պարտականությունները, ապա նրանց նկատմամբ գործելու ենք օրենքով նախատեսված ամենակոշտ մեթոդներով՝ ի բարօրություն մեր պետության և հասարակության: Կա՞ն դեռևս բացթողումներ, իհարկե կան, կա՞ն թերացումներ, իհարկե կան, կարևորն այն է, որ դրանք մեզ համար տեսանելի են և արվելու է ամեն ինչ դրանք շտկելու համար:

**ԱՆՁԻ ԱԶՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԵՆՄԵՆԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԹԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԸՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

**ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ**

Մարդու իրավունքների համակարգում առաջնային կարևորություն և նշանակություն ունեն անձնական իրավունքները, այդ թվում՝ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Առաջին անգամ այս իրավունքն ու դրա ապահովման երաշխիքները նախատեսվեցին անգլիական պառլամենտի կողմից 1679 թ. ընդունված Habeas corpus act-ում, իսկ հետագայում իրենց ամրագրումը գտան «առաջին հերթի» սահմանադրություններում: Ժամանակակից աշխարհում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի կարևորության գիտակցումով է պայմանավորված այդ իրավունքի օրենսդրական ամրագրումն ու պաշտպանությունը միջազգային մակարդակով:



Բնական է՝ քննարկվող անձնական իրավունքի խախտումներից զերծ չէր կարող մնալ նաև արդարադատության ոլորտը, որտեղ շոշափվում են անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման բազմաբնույթ հարցեր՝ կապված հանցավորության դեմ պայքարի, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման հետ: Այս տեսանկյունից քրեական դատավարությունում անձի ազատության և անձեռնմխելիության հարցերը վաղուց են հանդիսացել միջազգային քննարկումների առարկա և ժամանակին իրենց ամրագրումն են գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, ապահովվել միջազգային իրավական պաշտպանությամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է 1950 թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածին և դրա հիման վրա եվրոպական դատարանի կողմից իրականացվող իրավապաշտպան գործունեությանը:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստին համապատասխան՝ ազատությունից զրկում է համարվում ազատությունից զրկելու՝ օրենքով սահմանված իրավասություն ունեցող անձի կողմից օրենքով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության պայմաններում և օրենքով սահմանված կարգով անձի ֆիզիկական, անձնական ազատության սահմանափակումը: Ընդ որում՝ «անձեռնմխելիությունը» «ազատությունից» անկախ որևէ նշանակություն չունի. այդ իրավունքներից ցանկացածի իրականացման սահմանափակման վերաբերյալ պետության ցանկացած գործողություն կարգավորող գլխավոր սկզբունքը կամայականությունից խուսափելու մեջ է:

Մեր օրենսդրությամբ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքն առաջին հերթին ամրագրված է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում՝ հետևյալ բովանդակությամբ. «Յուրաքանչյուր որ ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով...»:

Գաղտնիք չէ, որ քննարկվող իրավունքի խախտման հավանակությունը հատկապես մեծ է հանրորեն վտանգավոր արարքների կանխմանը, խափանմանը, նախազգուշացմանն ու բացահայտմանն ուղղված քննչական, օպերատիվ-հետախուզական ու դատավարական գործողություններ իրականացնելիս: Ուստի, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հնարավոր խախտումների կանխման համար գործող օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանվեն վերը նշված գործողությունների իրականացման հիմքերն ու պայմանները: Այս կապակցությամբ պետք է նշել, որ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական կարգավորումը ունի որոշակի թերություններ, որոնցից մի քանիսին հարկ ենք համարում անդրադառնալ:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ որպես ազատությունից զրկելու հիմք, սահմանում է՝ «...առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով...»: Նախևառաջ, հարկ է նկատել, որ նշված սահմանադրական

դրույթը բովանդակում է անձին ազատությունից զրկելու երեք ինքնուրույն, այսպես կոչված, ենթահիմքեր: Դրանք են՝ ա) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, բ) երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կանխելու նպատակով, գ) երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործություն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով: Այս ենթահիմքերի վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ՀՀ Սահմանադրության վերը շարադրված կետում տեղ են գտել յուրջ բացթողումներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին:

Նախ՝ վերևում առանձնացված (ա) ենթահիմքում պարզ չէ, թե ով է այդ հիմքով ազատությունից զրկվող սուբյեկտը, այն դեպքում, երբ նույն կետում շարադրված (ինչպես նաև՝ 16-րդ հոդվածի նույն մասի մյուս կետերում) քիչ թե շատ հստակեցված է այն անձը, որի նկատմամբ կարող է կիրառվել ազատությունից զրկելու համապատասխան հիմքը:

Երկրորդ՝ Սահմանադրության քննարկվող կետի հաջորդ՝ (բ) և (գ) ենթահիմքերում բացակայում է այդ հիմքով ազատությունից զրկելու այնպիսի կարևորագույն պայման, ինչպիսին հիմնավոր կասկածի առկայությունն է, իսկ քննարկվող կետի բովանդակությունից չի ենթադրվում, որ դրանում օգտագործվող «հիմնավոր կասկած» եզրույթը վերաբերում է նաև նույն դրույթում ամրագրված 2-րդ և 3-րդ պայմաններին:

Սրա հետ կապված՝ հարկ ենք համարում համեմատական անցկացնել սահմանադրական և կոնվենցիոն նույնաբովանդակ դրույթների միջև: Այսպես, ազատությունից զրկելու համապատասխան հիմքը եվրոպական կոնվենցիայում շարադրված է հետևյալ ձևակերպմամբ. «Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան ... անձի օրինական կալանավորումն ու ձերբակալումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար...» (կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետ):

Ակնհայտ է, որ կոնվենցիայի նշված կետում «հիմնավոր կասկած» և «հիմնավոր կերպով» տերմիններն օգտագործված են այդ կետով սահմանված ազատությունից զրկելու բոլոր հիմքերում, և դա պատահական չէ, քանի որ միայն այդ դեպքում է անձի

ազատության իրավունքի սահմանափակումը համարվում է քաղաքացիական իրավունքի և օրինական: Հանցագործություն կատարած լինելու «հիմնավոր կասկածի» վերաբերյալ նախադեպային իրավունքը հաշվի առնելով եվրոպական դատարանն իր պրակտիկայի ընթացքում արձանագրել է. «Կասկածի հիմնավորվածությունը, որին համապատասխան պետք է իրականացվի ձեռքարկումն ու կալանավորումը, հանդիսանում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետում սահմանված կամայական ձեռքարկման և կալանավորման դեմ երաշխիքի կարևոր մասը ... «Հիմնավոր կասկածը» ենթադրում է փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք օբյեկտիվ դիտողին կհամոզեն, որ հնարավոր է, որ համապատասխան անձը կատարած լինի իրավախախտում»: Այդուհանդերձ, եվրոպական դատարանի կարծիքով, կասկածի «հիմնավոր» լինելը պետք է որոշվի գործի բոլոր հանգամանքները հաշվի առնելով: Սա, ըստ էության նշանակում է, որ անհրաժեշտ է քաղաքացիական օրենսդրության առկայություն այն մասին, որ անձի գործողությունները կամ անգործությունն ամենայն հավանականությամբ ուղղված են եղել նրա կողմից հանցագործության կատարմանը:

Երրորդ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում պարզ սահմանված չէ, թե ի վերջո ազատությունից զրկելն ի՞նչ նպատակ է հետապնդում, և համապատասխան սուբյեկտն ի՞նչ վարքագիծ պետք է դրսևորի անձին ազատությունից զրկելուց հետո: Բանն այն է, որ այդ հիմքով անձին ազատությունից զրկելն ինքնապատակ չէ, և բացի այն, որ ուղղված է հանցագործության կանխմանն ու խափանմանը, այն նաև անմիջականորեն նպատակ է հետապնդում բացահայտել հանցագործությունը՝ ազատությունից զրկված անձին հանձնելով իրավասու մարմիններին: Այդ իսկ պատճառով եվրոպական կոնվենցիայի քննարկվող դրույթում հստակ սահմանված է համապատասխան հիմքով ազատությունից զրկելու նպատակը, այն է՝ անձին իրավասու օրինական մարմինն ներկայացնելը: Ընդ որում՝ եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետում նշված «իրավասու օրինական մարմին» արտահայտությունը պետք է կիրառվի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում նշված «դատավոր կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված այլ պաշտոնատար անձ» նշանակությամբ: «Դատավոր կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված այլ պաշտոնատար անձ» արտահայտությունը 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետում օգտագործվող «իրավասու օրինական մարմին» տերմինի պարզաբանումն է:

Բացի այն, որ Սահմանադրությունը, որպես անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման երաշխիք, սպառնիչ թվարկել է ազատությունից զրկելու հիմքերը՝ միաժամանակ նույն 16-րդ հոդվածում նախատեսել է նաև քննարկվող իրավունքի ապահովման այլ ինքնուրույն երաշխիքներ: Իհարկե, Սահմանադրության մեջ նման երաշխիքների ամրագրումը բխում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունից, բայց, ցավոք, այս հարցում ևս մեր երկրի Հիմնական օրենքը թույլ է տվել որոշ անհստակություններ:

Ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման սահմանադրական երաշխիքներից հատկապես անհրաժեշտ է անդրադառնալ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին, որը սահմանում է՝ «... Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկված կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում»:

Սահմանադրության այս դրույթի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ Սահմանադրությամբ սահմանված բոլոր հիմքերով անձին ազատությունից զրկելը և անձնական խուզարկությունն իրականացվում է դատական վերահսկողության պայմաններում (դատարանի որոշմամբ), և

քննարկվող դրույթն ընդամենը կոչված է ապահովելու վերադասության կարգով դատարանի որոշումը բողոքարկելու անձի իրավունքը: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրությունը դատական վերահսկողություն է նախատեսում միայն կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքով անձին ազատությունից զրկելու դեպքի համար: Վերադաս դատական ատյանում վերաքննության կամ վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրականացման մասին խոսք կարող է լինել նաև հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից դատապարտվելու դեպքում (ՀՀ Սահմ. 16-րդ հոդվ. 1-ին մասի 1-ին կետ): Մնացած բոլոր դեպքերում, քանի դեռ Սահմանադրությամբ նախնական դատական վերահսկողություն նախատեսված չէ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման նկատմամբ, այդ իրավունքների և ազատությունների պաշտպանության համար վերադաս դատական ատյան դիմելու իրավունք վերապահելն ավելորդ է: Մյուս կողմից, սահմանադրական այս դրույթը, փաստորեն, անձին զրկում է իր ազատության և անձեռնմխելիության իրավունքի դատական պաշտպանության իրավունքից: Նման սահմանադրական կարգավորումը նսեմացնում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի դատական պաշտպանության երաշխիքի նշանակությունը: Ստացվում է, որ, օրինակ, սպորինի ձեռքարկման կամ խուզարկության ենթարկված անձը խուզարկության կամ ձեռքարկման օրինականությունն ու հիմնավորվածությունը կարող է բողոքարկել միայն վերաքննիչ (վճռաբեկ) դատարան, այլ ոչ թե առաջին ատյանի դատարան: Մինչդեռ, Սահմանադրության 18-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական ... պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Այսպիսով, հաշվի առնելով անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի կարևորությունը՝ ներպետական օրենսդրությամբ առավել հստակորեն պետք է ամրագրվեն այդ իրավունքի սահմանափակման համապատասխան հիմքերը և սահմանվեն դրա իրականացումն ու պաշտպանությունն ապահովող արդյունավետ նորմ-երաշխիքներ: Ընդ որում՝ այդ երաշխիքների սահմանման աղբյուր պետք է հանդիսանա պետության Հիմնական օրենքը՝ ամրագրելով ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ և քաղաքացիական կարգի դրույթներ: Այս կապակցությամբ, մեր կարծիքով, գործող Սահմանադրությունը հաջողված համարել չի կարելի: Կարծում ենք՝ հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ օրենսդրությամբ պետք է սահմանվեն դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման, ինչպես նաև այլ դեպքերում անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այնպիսի մեխանիզմներ, որոնց պայմաններում հնարավորինս կապահովվի անձի այս հիմնարար իրավունքի իրականացումն ու արդյունավետ պաշտպանությունը:

Հունգարական Էստերգոմ քաղաքի արխիվներում գտնվել է ավելի քան 200 տարվա հնություն ունեցող մի փաստաթուղթ, համաձայն որի, քաղաքի ծխող բնակիչները պետք է ծխի համար տուգանք վճարեն: Հավաքված միջոցները օգտագործվել էին հակահղեհային անձնակազմ պահելու համար:



16-րդ դարում մերձավոր արևելքի երկրներում ծխելու համար խիստ պատիժներ էին սահմանված: 1600թ.-ին պարսից Շահ Աբասն արգելեց ծխել: Ծխելիս բռնված զինվորների քթերն ու շրթունքները պետք է անմիջապես կտրեին, իսկ ծխախոտ վաճառողներին՝ այրեին ծխախոտի հետ միասին: 63 տարի անց շահի օրինակին հետևեց թուրքական սուլթան Մուրադ 4-րդը, որը հրամայեց անխնայ պատժել բռնված բոլոր ծխողներին: Այն տարիների պատմական փաստաթղթերն ասում են, որ այդպիսի դաժան պատիժների են ենթարկվել մի քանի հազար մարդ:

Իսպանական շատ պատգամավորներ դժգոհ էին պառլամենտի շեմքում ծխելն արգելելու որոշումից: Նրանց չէին համոզում այն վկայակոչումները, թե դա թելադրված է կոլեգաների առողջությունը պահպանելու մտահոգությամբ: Այդ ժամանակ ղեկավարությունը ստիպված այլ փաստարկի դիմեց՝ ծխախոտի ծուխը վնասակար ներգործություն է ունենում պառլամենտի դահլիճը զարդարող որմնակարների վրա: Եվ, ի վերջո, ծխողները տեղի սվեցին:

- Ես հպարտանում եմ իմ դուստրերով և հուսով եմ, որ հաջողությամբ կամուսնացնեմ նրանց, - ամձանոթ երիտասարդին վստահորեն ասաց աղջիկների հայրը: - Ես բավական փող եմ կուտակել, այդ պատճառով էլ նրանք անօժիտ չեն ամուսնանա: Օրինակ՝ Բեաթրիսը: Նա տասնհինգ տարեկան է և իրոք փառահեղ աղջիկ է: Երբ ամուսնանա, ես նրան հազար դոլար կհատկացնեմ: Հետո գալիս է Բարենիսը, որը շուտով կդառնա երեսունհինգ տարեկան: Ես նրան երեք հազար դոլար կտամ, իսկ այն մարդը, որը կամուսնանա Բեուսի հետ (իսկ նա քառասուն տարեկան է), կստանա հինգ հազար:

Երիտասարդը մի փոքր մտածեց, հետո հարցրեց.  
- Իսկ հիսունին մոտ աղջիկ չունե՞ք :

Աղջիկ - Դե ինչ, հորիցս վերջնականապես խնդրեցի՞ր իմ ձեռքը: Ի՞նչ ասաց նա:

Տղա - Ոչ մի բան: Ուղղակի նետվեց գիրկս և ուրախությունից հեծկլտաց:

Դատավոր - Դուք ասել եք, որ պարոն Պետրոսյանը սրիկա է և խարդախ: Այդ ճի՞շտ է:

Ամբաստանյալ - Ճիշտ է, ճիշտ է, բայց այդ ես չեմ ասել ...

Դատավոր - Մեղադրյալ, բավարար ապացույցների բացակայության պատճառով դուք արդարացվում եք:

Թափառաշրջիկ - Շնորհակալ եմ, պարոն դատավոր: Հաջորդ անգամ ես ձեզ նույնպես կուրախացնեմ:

Դատավոր - Իսկ ինչո՞վ:

Թափառաշրջիկ - Խոստովանությամբ:

Հաճախորդ - Ես հաստատապես որոշել եմ կնոջիցս բաժանվել:

Փաստաբան - Իսկ ինչքա՞ն ժամանակ է, որ ամուսնացած եք:

Հաճախորդ - 21 տարի:

Փաստաբան - Իսկ ե՞րբ եք որոշել բաժանվել:

Հաճախորդ - 21 տարի առաջ:

Դատավոր - Եվ այսպես, դուք շարունակում եք պնդել, որ դուռը ջարդել եք մենակ, առանց մեկ այլ մասնակցի:

Ամբաստանյալ - Այո, պարոն դատավոր: Եթե դուք իմանալիք, թե որքան դժվար է այսօր գտնել ազնիվ գործընկեր ...

Շոտլանդացին բողոքով գալիս է աներոջ մոտ.

- Ես այլևս ի վիճակի չեմ ապրել ձեր աղջկա հետ, ամեն օր կռվում եմք:

- Ախ, այխր նա հիմար է: Ասա նրան, փեսա, սիրելիս, որ եթե մի անգամ էլ դու նրանից բողոքես, ես նրան կզրկեմ ժառանգությունից:

- Լսելով այդ՝ փեսան այլևս երբեք աներոջը չբողոքեց:

Դատավոր - Դուք համոզված եք, որ կալանավորվածը հարբած է եղել: Ոստիկան - Ես համոզված չեմ, բայց նրա կինն ասում է, որ նա կոյուղու անցքի կափարիչը վերցրել է և ցանկացել է դնել նվազարկչի վրա:

Դատավոր - Եվ դուք հաստատում եք, որ իբր պատասխանողն ասել է, թե դուք հիմա՞ր եք:

Հայցվոր - Այո: Նա իսկապես ասել է: Ահա նրա խոսքերը. «Իսկ ինչ վերաբերվում է ինտելիգենտությանը, ապա մենք թեզ հետ միասին գտնվում ենք նույն աստիճանի վրա»:

Դատավոր - Եվ այսպես, մեղադրյալ, տուժողը ձեզ անվանել է էշ: Հետո ի՞նչ է տեղի ունեցել:

Մեղադրյալ - Հետո եկավ շտապ օգնությունը և նրան տարավ հիվանդանոց:

«Բնակչին կոտպերատիվի կանոնադրության, ինչպես նաև փաստացի զբաղեցրած բնակմակերեսի համաձայն՝ Ղազարյանը կարող է բաժանվել ամուսնուց»:

(վճռից)

«Ինչ մնում է տունը բաժանելուն, ապա հայցվորն իրավունք չունի կռվի մեկ երրորդի նկատմամբ»:

(վճռից)

«Խաչատրյանը աշխատանքից վերադառնալիս ճանապարհին ընկել է սառցի ճեղքի մեջ, որը նրա մոտ առաջացրել է ոտքերի և քթի ֆունկցիաների խախտում»:

(որոշումից)

«Ես ապրում եմ սանամի դիմաց: Նրբանցքը շատ նեղ է: Հաճախ մեքենան գիշերում էր Եզանյանի մոտ՝ նրբանցքում, և այն էլ անսթափ վիճակում»:

(նիստի արձանագրությունից)

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ**

Հեռ.՝ (374 10) 54-01-99  
Ֆաքս՝ (374 10) 58-02-99  
Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,  
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝  
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝  
Նարինե Կարապետյան

**«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ»  
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ**

Տպաքանակը՝ 500 օրինակ  
Ծավալը՝ 1 տպ. մամուլ  
Ստորագրված է տպագրության  
30.04.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից